ԼՐԱՏՈՒ

ԳԻՏՆԱԿԱՆԻ ԵՎ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆԻ ՄԵԾ ՎԱՍՏԱԿԻ ՆՈՐ ԳՆԱՀԱՏՈՒՄ

(Ա. Կարինյանի ծննդյան 95-ամյակի առթիվ)

ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1981 թ. նոյեմբերի 10-ի հրամանագրով Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Արտաշես Բալասիի Կարինյանը (Գարրիելյան) պարգևատրվել է Հոկտեմբերյան հեղափոխության շքանշանով։ Հայրենիքի այդ բարձր պարգևը ճանաչումն է հեղափոխական, հասարակական-քաղաքական և գիտական այն անդուլ գործունեության, որ ծավալել է 1907 թ. կուսակցության անդամ Ա. Կարինյանը։

Ա. Կարինյանը լենինյան հին գվարդիայի գործիչներից է։ Տակավին պատանի հասակից նա զինվորագրվեց բանվոր դասակարգի ազատագրության վեհ գործին, անցավ հեղափոխական գործունեության մեծ ճանապարհ և որպես բոլշևիկ ձևավորվեց դեռևս աշակերտական տարիներին՝ Ստ. Շահումյանի, Ս. Սպանդարյանի, Ա. Ջափարիձեի և ականավոր այլ լենինյանների գաղափարական ազդեցությամբ։ Ա. Կարինյանն Անդրկովկասի հեղափոխական շարժման շատ գործիչների նման բազմիցս ենթարկվել է ռեպրեսիաների, բանտի ու աքսորի, սակայն այդ ամենը չեն ընկճել անկոտրում լենինյանին և նա միշտ էլ գտնվել է հեղափոխական իրադարձությունների կիզակետում։

1917 թ. Ա. Կարինյանը Պետրոգրադի հեղափոխական մարտիկների առաջին շարքերում էր, մեկը նրանցից, ովքեր բախտ ունեցան Ֆինլանդական կայարանում լսելու մեծ առաջնորդի պատմական ճառը։ Այնուհետև, 1918 թ. նա Բաքվում էր, ուր աշխատում էր Ստ. Շահումյանի անմիջական ղեկավարությամբ՝ վարելով նրա գլխավորած Բաքվի ժողկոմսովետի արդարադատության կոմիսարի պատասխանատու պաշտոնը։ Միաժամանակ Ա. Կարինյանը խմբագրում էր բանվորների և զինվորների դեպուտատների Բաքվի սովետի «Տեղեկագիրը»։

Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո կուսակցու-

թյան որոշմամբ նա գալիս է Հայաստան և ստանձնում հանրապետության արդարադատության ժողկոմի պաշտոնը։ Այնուհետև Անդրկովկասում և Հայաստանում նա վարում է մի շարք կուսակցական-սովետական պատասխանատու պաշտոններ։

Ա. Կարինյանը իր հեղափոխական, կուսակցական-պետական գործունեությունը հաջողությամբ զուգակցել է գիտական աշխատանքի հետ։ Նա միշտ էլ գտնվել է գրականության կուսակցականության համար պայքարողների առաջին շարքերում։ Ա. Կարինյանն իր աշխատություններում բարձրացրել է քաղաքական-գրական կյանքի բազմաթիվ հրատապ հարցեր, որոնք քննել է մարքսիզմ-լենինիզմի դիրքերից, շարունակ հանդես գալով որպես պրոլետարական ինտերնացիոնալիզմի և ժողովուրդների բարեկամության մեծ ջատագով։ Ա. Կարինյանի գրական-գիտական վաստակի անբեկանելի մասն են կազմում նրա «Սոցիալական պայքարի արձագանքները հայ հին գրականության մեջ», «Ռուս գրականության նշանակությունը սովետահայ գրականության համար», «Միքայել Նալբանդյանը և 19-րդ դարի 60-ական թվականների ռուս առաջավոր գործիչները», «Անտոն Չեխով», «Հովհաննես Թումանյան», «Մ. Մամուրյանը մշակույթի պատմության մասին», «Եղիշե Չարենց» և այլ մենագրություններ ու հոդվածներ։ Թվարկված աշխատությունների վերնագրերն իսկ խոսում են ականավոր գիտնականի հետաքրքրությունների ընդգրկուն շառավղի և արդիականության հետ ունեցած սերտ կապի մասին։

Հսկայական է Ա. Կարինյանի վաստակը հայ պարբերական մամուլի պատմության ստեղծման գործում։ Այդ բնագավառում նրա կատարած պրպտումների արդյունքն է «Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության» կապիտալ աշխատությունը, որը արժեքավոր ավանդ է հայ լրագրության պատմության մարքսիստական լուսաբանման բնագավառում։

Ա. Կարինյանի գիտական վաստակը բարձր է գնահատվել. նա ՀՍՍՀ ԳԱ իսկական անդամ է, տարիներ շարունակ աշխատել է ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների ակադեմիկոս քարտուղարի և փոխպրեզիդենտի պաշտոնակատարի պաշտոնում։

Ա. Կարինյանը բազմիցս ընտրվել է ՀԿԿ Կենտկոմի անդամ, եղել է ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին կից գիտության և տեխնիկայի գծով Լենինյան մրցանակներ շնորհող կոմիտեի անդամ։

Կուսակցությունը և կառավարությունը միշտ էլ բարձր են գնահատել հեղափոխական ականավոր գործչի և տաղանդավոր գիտնականի ծառայությունները։ Նա Սոցիալիստական աշխատանքի հերոս է, պարգևատրվել է նաև Լենինի, Աշխատանքային կարմիր դրոշի շքանշաններով, մեդալներով և պատվոգրերով։ Չնայած պատկառելի հասակին, նա այժմ էլ լի է երիտասարդական ավյունով և իր հսկայական փորձն ու գիտելիքներն ի սպաս է դնում սովետահայ գիտության զարգացման, երիտասարդ գիտաշխատողների դաստիարակման և կոմունիստական շինարարության վեհ գործին։

Ականավոր լենինյանին և նշանավոր գիտնական-քաղաքացուն ցանկանում ենք քաջառողջություն և նորանոր ստեղծագործական հաջողություններ՝ ի փառս սովետահայ գիտության հետագա զարգացման։

«ԼՐԱՐԵՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ»
ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ